



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелкъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Ե Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւարանիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ Ե Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ, ՅԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԻ 12-ԻՆ,

Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքում,

Գ Ա Մ Ա Ռ - Ք Ա Թ Ի Պ Ա Յ Ի

արձանի բացման օրը, կատարվում է

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ի Ո Ր Հ Ո Գ Ե Հ Ա Ն Դ Ի Ս Տ

2—3

Գր. Չախուշեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գամառ-Քաթիպայի յիշատակին. — Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ. Յօդուհանական
հանգէսները. Միջկարեւմտեան յօդուհանակը.
Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արաւաքին լուրեր. —
ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրակար. — ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Գրական դէմքեր.

ԳԱՄԱՐ-ՔԱԹԻՊԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Մշակի» ընթերցողները զիտեն, որ
այսօր, սեպտեմբերի 23-ին, Նոր-Նախիջե-
ւանի ս. Խաչ վանքում կը բացվի Գամառ-
Քաթիպայի արձանը եւ կը կատարվի նրա
գերեզմանի վրա հանդիսաւոր հոգեհան-
գիստ: Այդ առիթով «Մշակի» խմբագրու-
թիւնը ուղարկեց Նոր-Նախիջևանի Գրիգոր
Չախուշեանին մի հեռագիր հետեւեալ բո-
վանդակութեամբ. «Մշակի» խմբագրու-
թիւնը Պատկանեանի արձանի բացման ա-
ռիթով յայտնում է իր խորին յարգանքը
դէպի նա, որ զիտէր կարգաւ իր ժողովրդի
սրտերը եւ որ տաղանդաւոր երգով
երգեց նրա ուրախութիւններն եւ ցաւե-
րը: Խմբագրութիւնը խնդրում է զինք
արձանի վրա կենդանի ծաղիկներով մի
պսակ:

«Մշակի» ներկայ համարը մենք նուի-
րում ենք մեր ժողովրդական բանաստեղծի
յիշատակին:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԳՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

Բ Ա Փ Ա Յ Է Լ Պ Ա Տ Կ Ա Ն Ն Ա Ն

Եւ երբեք երգ ուրում ու անուշ,
Իմ ջնարի ձայնն էր մեղմիկ ու քնքշուշ...

Գամառ-Քաթիպա

I

Երգ, ուրում, անուշ երգ... Սա էր, որ ե-
կու մեզ զարթեցնելու: Մեր մանկութեան ա-
ռաջին օրերում մեր ականջին մայրնի երգը
հնչեց: Դեռ չը կար մեզանում վէպ, դեռ չը
կար հրապարակախօսութիւն, թատերադրու-
թիւն. դեռ նոյն իսկ լեզու չունէինք մենք,
աշխարհիկ, ժողովրդական լեզու: Բայց կար
երգ: Այն էլ ինչպիսի երգ. — ուրում, անուշ...
Եւ բնական չէր: Կապկապած, խոր ճնի մէջ
թաղված մի ժողովուրդ: Զարթնում է նրա
մէջ գիտակցութեան առաջին նշույլը, առաջին
չնչաւ: Եւ դա անպատճառ երգ զիտի լինէր.
Երգը, որ հասկանալի է նոյն իսկ անկեղծ մա-
նուկին:

Ով գգում է, ով յոյս ունի, ով վիշտ ունի,
նա երգում է: Ոչ ոք չէ կարող հարցնել նրան —
գիտե՞ս երգը, ունի՞ լեզու, ունի՞ բառեր: Նա
երգում է իր սրտին, իր բախտին, եւ ա-
նուշ, սրտուն է այդ երգը նրա համար:

Ո՞րտեղից էին գալիս այդ երգերը:
Քառասնական թուականների վերջն էր: Դեռ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ
LX

Այսօր Նոր-Նախիջևանում արձան են կանգ-
նեցնում Ռաֆայէլ Պատկանեանին կամ, աւելի
ճիշդ ասած, Գամառ-Քաթիպային, որովհետեւ
Ռաֆայէլ Պատկանեան գոյութիւն է ունեցել
միայն իր ծանօթների համար եւ այժմ գոյու-
թիւն կարող է ունենալ միայն զբաղւած ջըն-
նադատի համար, որ նրա երկերի լուսաբանու-
թիւնը գտնելու է մասամբ նրա կեանքի եւ
նրա անձնաւորութեան մէջ:

Ազգի համար եղել է եւ կայ միմյանի Գա-
մառ-Քաթիպայի, այսինքն Ռաֆայէլ Պատկա-
նեանը իր ոգեւորութեան, իր խանդի բուռն-
ներում, այն բուռնութեամբ, երբ ձախալի, ան-
ձայն, խորհուրդ ձակատին՝ նա «մտքով մօլոր-
ված» ներշնչումն էր փնտրում երկնքից:

Զուր չէին հնար երկնքին ծագում վերա-
գրում բանաստեղծական աւելին: Բանաստեղ-
ծի սովորական անձնաւորութիւնը չէ, որ խո-
սում է նրա ոտանավորներում: Նրանք, այդ
ոտանավորները, բոլորում են նրա ներքին, նուի-
րական էութիւնից, որ սովորաբար արտայայտ-
վում է միայն բացառիկ բուռնութեամբ:

Հոգեբանութեան, իսկապէս պսիխատրիայի
մէջ յայտնի է անձնաւորութեան երկուս-
ման, երկրամասնութեան երկույթը: Մի եւ նոյն
մարդը զանազան օրեր յաջորդաբար արտա-
յայտում է երկու, երբեմն իրար բոլորովին

հակառակ, բնաւորութիւններ, ապրում է երկու
տարբեր կեանքով: Այսօր նա կենսութեան,
ոգեւորով, յափշտակվող անձնաւորութիւն է,
վաղը մտայն, անտարբեր, թմրած, հետեւեալ
օրը դարձեալ կենդանի, աշխոյժ, այնուհետեւ
տխուր եւ տրտում, եւ այդպէս յաջորդաբար,
եւ մինչ այն աստիճան, որ ուրախ օրերը
նա բոլորովին կորցնում է տխուր օրերի յիշո-
ղութիւնը եւ ընդհակառակը, — այնպէս որ ու-
րախ օրերը կազմում են իրար անմիջական
չարունակութիւն, ինչպէս նաեւ տխուրները:

Այդպիսի երկուութիւն յաճախ նկատվում է
նաեւ բանաստեղծների մէջ, որոնք ուրիշ կող-
մերից էլ որոշ նմանութիւններ են ցոյց տալիս
հոգեկան հիւսնանքների հետ, լինելով նոյն
իսկ բոլորովին առողջ, երբեմն ամենաառողջ-
ները մեր, հասարակ մահկանացուների մէջ:

Ո՞րքան տարգիւղ էր մտքում ուսու բա-
նաստեղծ Ներսիսովի կեանքի մէջ այդ երկու-
թիւնը: Ո՞րքան ուրիշ բանաստեղծներ նոյն-
պիսի երկուութիւն են ներկայացրել:

Այդպէս էր նաեւ Ռաֆայէլ Պատկանեանը,
բայց, կրկնում ենք, այդ հետաքրքրական է
միմյանի զբաղւած ջննադատների համար: Թող
նրանք ջննեն, ջննադատեն, բացատրեն, դա-
տապարտեն կամ արդարացնեն այն մարդուն,
որ այս ինչ թւի այս ինչ ամսին ծնվել է Նոր-
Նախիջևանում, Պատկանեան ընտանիքում,
մկրտութեան աւագանւում ստացել է Ռաֆայէլ
անունը եւ այնուհետեւ ապրել է մեր մէջ
իրբեւ մէկը մեզանից: Բայց ազգը հետաքր-
քովում է միայն Գամառ-Քաթիպայով, ազգը
իր սրտի նուիրական խորքերում պահպանում
է Գամառ-Քաթիպայի յիշատակը եւ այսօր ար-
ձան է կանգնեցնում Գամառ-Քաթիպային:

Խոնարհվեց այդ արձանի եւ այդ յիշատակի
առաջ: Մեր ազգի լուսագոյն իրձերն են կապ-
ված այդ յիշատակի հետ: Մեր ազգի մեծագոյն
բանաստեղծին է յաւերժացնելու այդ յուշաբ-
ձանը, այն հայ բանաստեղծին, որ տուել է
մեր նորագոյն բանաստեղծութեան միակ կա-
մակական երկը, «Մայր Արաքսին», եւ որի
լուսագոյն գրուածքների մէջ խօսում էր ամ-
բողջ ազգի սիրտը:

Տ. Թ.

Ընդունակ աշակերտներին սկսում են իրանց
հաշուով ուղարկել Դորպատ՝ ուսումը շարու-
նակելու համար: Հաւաքվում են այնտեղ հայ
ուսանողները, տոգորվում են ժամանակի գե-
ղեցիկ գաղափարներով: Նրանք հասկանում են,
որ մի ազգի զուակներ են. հասկանում են
նոյնպէս, որ այդ ազգը ոչինչ չունի, ոչ զգաց-
մունք, ոչ գաղափար, ոչ ներկայ եւ ոչ ապա-
գայ: Յուսահատական դրութիւն հասկացող
խորհող, իր շուրջը նայող մարդու համար
ի՞նչ են անում մեր երիտասարդները: Սկսում
են երգել:

Բայց երգելու բան կայ: Կայ, եւ դա հէնց
իրանց ուսանողական կեանքն է: Ամենից ա-
ռաջ եւ ամենից շատ այդ կեանքը, որ լին
է անհոգ քէֆերով եւ ազնիւ իրէջանքով:
Չենք կարող ասել, թէ մեր ուսանողները ինք-
նուրոյն երգչներ են: Ուսանողական երգերը
նրանք թարգմանում էին գերմաներէնից,
մայրենիով նրանց մէջ հայ անունը: Բայց դրա-
նից ինչ վնաս: Գերմաներէնից թարգմանած,
հայութեան վրա կարկառած այդ երգերը, ո-
րոնք մի փոքրիկ դասակարգի, ուսանողու-
թեան կեանքն էին պատկերացնում, դարձան
ժողովրդական, եւ հայը երկար ժամանակ եր-
գում էր նրանց, երգում էր ուսանողներին,
յաճախ չիմանալով թէ ովքեր եւ ինչեր են
գրանք:

Յիշում էք.

Այն ի՞նչ ազգ է, այն ի՞նչ ցեղ է,
Որ միշտ անկախ է
Որ երբեք սէրից չէ վախում
Որ միշտ հարս ունի,
Եւ իր անձով, անպակաս կեանքով
Դարդ ու հոգս չունի:

ՅՕԲԵԼՆԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ

Վերջնականապէս որոշված է Վրաստանի եւ
Ռուսաստանի միացման հարկւրամեայ յօդ-
ւանի հանդէսները կատարել հետեւեալ ծրա-
գրով:

Սեպտեմբերի 24-ին. — Դիմաւորումն կայա-
րանում Բարձրագոյն Անձերին: Դիմաւորում
են Թիֆլիսի եւ Գուլայիսի նահանգների ազ-
նուականութեան նահանգական եւ գաւառա-
կան պարագլուխները, այդ նահանգների ազ-
նուականներն եւ պատուաւոր կանայք:
Պատուաւոր պահակախումբ աղնաւականներից
եւ հեծեալ պատուաւոր կցորդներ:

Սեպտեմբերի 25-ին. — Առաւօտեան 9 ժա-
մին սկսվում է պատարագ Սիօնի մայր եկե-
ղեցում, ժամի 11¹/₂-ին. — հոգեհանգիստ, որից
իետոյ կարճ մաղթանք:

Սեպտեմբերի 26-ին. — Առաւօտեան 9 ժամին
սկսվում է պատարագ Սիօնի մայր եկեղեցում:
Նոյն ժամին աղնաւականների ընդունելութիւն
կառավարապետի պալատում (Ներկայացող
աղնաւականները զալիս են իրանց պարա-
զուխներին հետ միասին): Ընդունելութիւնից
իետոյ ուղեւորութիւն դէպի Սիօնի մայր եկե-
ղեցին: պատարագին ներկայ լինելու ժամի
11-ին, պատարագից յետոյ, սկիզբն եկեղեցա-
կան թափօրի Սիօնի եկեղեցուց: (Թափօրի
ճանապարհին կանգնում են զօրքերի շարքեր
առանց զէնքի): Ժամի 11³/₄-ին եկեղեցական
թափօրի գալուստը մաղթանքի համար դէպի
Գունիբեան հրապարակ: Ժամի 12¹/₂-ին մաղ-
թանքի աւարտումն Գունիբեան հրապարակի
վրա: Յերեկվայ ժամի 3-ին զօրքի հիւրասիրու-
թիւն աղնաւականութեան եւ քաղաքի կողմից
Վերայում, Արտիլերիական զօրանոցների մօտ:
Երեկոյեան 8¹/₂ ժամին. — հանդիսաւոր ներկա-
յացումն արքունական թատրոնում Ներկայա-
ցումը տրվում է աղնաւականութեան կողմից:

Սեպտեմբերի 27-ին. — Առաւօտեան ժամի
10-ին ներկայացումն արքունական թատրո-
նում Թիֆլիսի եւ Գուլայիսի ազգաբնակու-
թեան ներկայացուցիչների եւ կովկասեան պա-
տերազմների վետերան-զինուորների համար.
(սկիզբն ժողովրդական տօնի կառավարապետի
կողմից): Յերեկվայ ժամի 2-ին ճաշ եւ ժողո-
վրդական տօն Զիարչաւի հրապարակում յիշ-
ված ներկայացուցիչներին եւ վետերաններին:

Ով միշտ առաջին կուտ
Հարկեմեայ համար,
Փալլոն զինին շրջով կոնծում
Որախ, բայց արդար...

Դա ուսանողն է: Յիշեցէք ուրիշները,
Վրաբնակներին, Վերք որ հողից մարդ դար-
ձայ, «Բաժակներ առնունք, եղբարք», «Ու-
ղիդ զինետունից ես տուն եմ գնում», «Թէ
ծիսաքաղը ձեռքիս», «Ահա սուրհանդակի սայ-
լակը եւ այլն եւ այլն: Այդ բոլորի մէջ ե-
ռում է աղվալից, թարմ կեանքը. հնչում են
բաժակները, հայ աղջիկները համայններ են
տալիս, թաղաւորում է անհոգութիւնը, սա-
կաւապետութիւնը, կծու արհամարհանքի են
մատնվում հարստութիւնն ու պատիւները,
պաշտվում է հայրենիքի վեհ ու սուրբ գաղա-
փարը:

Այդպիսի բաներ դեռ չէր տեսել հայը, Նա-
րեկի միտքեական մրտնջնեքով ապրող,
կրօնական հատորներով չըջապատված եւ պա-
շտված հայը:

Ո՞րպիսի ինքնավստահութիւն, սրբիսի երի-
տասարդական թափ ու եռանդ: Ամբողջովին
զգացմունք ու պարտականութիւն է դարձել
հայ ուսանողը: Ազատվել է նրա լեզուն, ա-
զատվել է զբարարի քարացնող ծանրութիւ-
նից: Այլ եւս նա անմարս, արհեստական, ան-
ճոռնի, ճոռոմարս ոտանավորներ չէ թխում
եղնիկի լեզուով: Գտել է նա նոր զանձը. սէր,
կոյսի աչքեր, զինի, հայրենիք. — սրանք ոգե-
ւորում են, սրանք տաքացնում են, որովհե-
տեւ երգվում են ժողովրդի կենդանի լեզուով:
Ի՞նչպէս յանկարծակի, անսպասելի կերպով
զգացում սիրտը մի այդպիսի փափուկ ու ճկուն
գործիք դառաւ իր յոյզերը, իր ցանկութիւն-

Ժամի 7 1/2-ին երեկոյեան—ճաշ աղնուականութեան կողմից Թիֆլիսի Արտիստական ընկերութեան շինութեան մէջ։ Երեկոյեան հրախաղութեան Թիֆլիսի շրջակայ լեռների վրա քաղաքի կողմից։

Սեպտեմբերի 28-ին. — Ծերեկվայ ժամի 12 1/2-ին նախաճաշ Թիֆլիս քաղաքի կողմից Թիֆլիսի հասարակական ժողովարանի ամսաբային ընկերութեան (Միջայլեկան պրոսպեկտի վրա) Երեկոյեան ժամի 9-ին—Թէյ աղնուականութեան կողմից Թիֆլիսի Կրուժոկի ամսաբային ընկերութեան մոտ։

Սեպտեմբերի 29-ին.—Ծերեկվայ ժամի 1-ին—Նախաճաշ կառավարչապետի մոտ Թիֆլիսի եւ Գրուշուի նահանգների աղնուականութեան ներկայացուցիչների համար։

ՄԻՔԱՐԱՆԱՆԵՐԻ ՅՕՐԵՆԵԱՆԸ

III

Սեպտեմբերի վրա կարգացուցան հետզհետե տեղացող հեռագիրները եւ նամակները, որոնց ցուցակը կը դնեմ յետոյ, առաջարկվեցան բաժանիք, խօսվեցան ճառեր։ Այս ճառերից մի քանին ամփոփելով տալիս եմ ընթերցողներին—*Illustrazione Italiana* հանդիմ խմբագիրը հետեւեալն ասաց իտալերէն լեզուով։

«Յանուն մամլոյ՝ որի բազմաթիւ ներկայացուցիչներն խմբված ենք այստեղ, պարտք եմ համարում մեր անկեղծ շնորհաւորութիւններն ու մաղթանքները մատուցանել ձեզ, գեր. տէր եւ մեծարգոյ հայրեր. դուք, որ ձեր գիտութեամբ եւ ժիւղը շնորհով հայկական մամուլի պարծանքն էք... Ներեցէ՛ք ինձ, մեծարգոյ հայրեր, դուք, որ երկար ժամանակ ձեր լոխն որմերի մէջ ասպնջականցիք անգիրացի անմահ բանաստեղծը—Լորդ Բայրն,—ներեցէ՛ք ինձ որ նրա հայրենակցին մի խօսքը յիշատակեմ հոս... Սպէնսէր ասած է. «Գիտութիւնը միանգամայն բարոյական է». եւ դուք էք այս ճշմարտութեան կենդանի գրաւականները։ Իտալացի մ'ալ ասած է. «Գիտութիւնն է միանգամայն ազատութիւն». դուք, որ գիտութեան բարձրագոյն կատարումը հասել էք, մի վեհաբարձ. սփռեցէ՛ք այդ ձեր ազգին մէջ եւ պիտի գտնէք ազատութիւն։ Ձերված էք դուք ամենագործարար գէնըով, որի գէն թոյլ են սուրբեր, անգոր են ռուսներ, եւ անո՞վ պիտի կանգնէ՛ք ձեր հայրենեաց բարձունքների վրա յաղթական դրօշը, որի փութով ծածանելը կը մաղթեմ...»

Յետոյ խօսեց ազատական երեսփոխան Գալլի, որ Կրիսպին նախարարապետութեան օրով գործակից էր նրան։ Ահաւաստի Գալլիի ճառի համառոտութիւնը.

«Այսօր, մեծարգոյ հայրեր, յայտնելով անկեղծ մաղթանքս՝ յայտնում եմ միանգամայն, որ վեհապետի լինելու վրա ցաւում եմ ու պարծնում եմ։ Բիւրաւոր հեռագիրներ ու նամակներ, որ կարգացուցան այս երկու օրերի մէջ՝ անսօստ վկաններ են ձեր առ ձեր ազգին։

Ներք մի սքանչելի պարզութեամբ արտայայտելու համար Դորպատի հայ ուսանողները Երեսփոխանի վերնատանը հաւաքված առաջնակներին են նման։ Նրա վրա իջնում է մի հրեղէն լեզու—մեր աշխարհաբար, որ լցնում է նրանց խօսելու, համոզելի կերպով խօսելու ընդունակութեամբ, ստեղծագործական շնորհքով։ Գերմաներէնից թարգմանված ուսանողական երգերի մէջ մի փայլում են եւ ինքնուրոյն գործերը։ Դորպատում ստեղծվեց մեր հռչակաւոր «Միժենակը»։

Անմոռանալի ժամանակներ... Մանկութիւնը անուշ ու քաղցր է ամեն տեղ, ամեն բանի մէջ։

Մեր գրական մանկութեան այդ գեղածիճաղ արշալուսին երգը, յաճախ մի հատիկ թարգմանական երգը, գրական անուն էր ստեղծում երիտասարդ ուսանողի համար։ Եւ մենք ունենք մի քանի սիրելի անուններ, մեր առաջին երախտաւորների անունները՝ Աւագեանց, Ասկարեանց, Դոդոյեանց, Գերբեք Պատկանեանց։

Մեր արշալուսի երգիչների խմբումն էր եւ այն մարդը, որին երկինքը տուել էր մի հզօր տաղանդ։ Մի մարդ էր դա, սրին վիճակված էր դառնալ իր ազգի միակ մեծ երգիչը, մի մարդ, որի իւրաքանչիւր տողը ժողովրդական, ազգային երգ դարձաւ։

Դա Ռաֆայէլ Պատկանեանն էր։

IV

Ռաֆայէլ Պատկանեանը բանաստեղծների ընտանիքի զաւակ էր։

Բանաստեղծ էր նրա պապը. Սերովլէ վարժապետ Պատկանեան։ Այս մարդը տասնութ

գր մատուցած երախտիքների եւ իրենց փոխադարձ երախտագիրութեան ծաւալում եմ, որ վեհապետի լինելովս՝ հայ չեմ եւ զանոնք չեմ կարող հասկանալ։ Սակայն եւ այնպէս՝ կայ մի բան, որ ամեն մարդ հասկանում է.—դա սրտի զգացումն է։ Ձեր շնորհքը, ձեր ոգեւորումը, որ արտայայտում էք հասած նամակներն ու հեռագիրները կարգալիտ, ազգում են մեր վրա եւ երբ ձեր սրտերը բաբախեն՝ բաբախում են նաեւ մեր սրտերը... («Միժենակը» գիրքն արեւմտեան ճաշակով յօդված ու զարգարված գեղեցիկ պատկերներով, սակայն եթէ նրա ներքինը հայերէն լինելու պատճառով անհասկանալի է ինձ, նրա արտաքինը չապկալ ինձ հետ խօսում է ըստականին.—ոն տեսնում եմ վեհապետի՝ Արքիպանի դիմուն, որ հաշտ, երախտագէտ աչքով մը նայում է դէպի ձեզ, որ իր հիւրերն էք, իր բարեբարները, իր պարծանքը։ Դուք, կրօնքի եւ գիտութեան ախոյեաններ, մինչեւ Ասիայի հեռաւոր անկիւնները տանում էք վեհապետի անունը, իտալիայի փառքը... Մի բան միայն խնդրում եմ ձեզանից,—երբ դուք եթէք ձեր նուիրական հայրենիքը, երբ առաջնական քայլերով բարձրանաք նրա սրտերի վրա, չըլձեք նրա ծաղկազարդ հովիտների մէջ, ասացէ՛ք այն սարերին, ասացէ՛ք նրա գետերին ու ծաղիկներին, ասացէ՛ք, որ աշխարհիս մէջ կայ մի քաղաք, որ կրած է ձեզ նման սով, հիւանդութիւն եւ թշնամութիւն։ ասացէ՛ք, որ ապրում է ձեռն մի ժողովուրդ, որ իր արիւթեամբ՝ Աստուծոյ օգնութեամբ կրցաւ բարձրացնել իր գլուխը գերութեան լուծի տակից, եւ որ այժմ ազատ՝ կողովուն է ձեզ, իր եղբայրներին, եւ կը մաղթէ ձեզ նոյն ազատութիւնը...»

Ամենից հետաքրքիրն է իտալացի մի սպայի հայերէն բաժակածառը։ Այս սպան պաշտօնունի վերջին քաղաքում կեցող գիտութեան գնդի մէջ. անունն է Նինո Մանուօլանի. շատ երիտասարդ տակաւին։ Ահաւաստի այդ ճառի ամբողջութիւնը, որ իմ խնդրանքիս վրա յանձնեց ինձ յիշելու սպան։

«Երբեւ նախկին աշակերտ Մուրադ-Ռաֆայէլեան հայ վարժարանին՝ վերապատեալ Միժենակեան հարց ձեռքին տակ, իտալիայ մէջ զատարարված, իր մէջ հատիկ օտարազգին, պարտականութիւն մը կը զգար այսօր՝ հայոց եւ իտալացուց միանգամայն մեծ տօնին առթիւ, ըմպել հոս բաժակը՝ երախտագէտ հիւանդութեան լեզուով։

Աշխարհ ամբողջ, որ այս կախարդված կըլդեալին կը նայի այսօր, ուր Աստուծոյ շնորհագին հաւատքը եւ հայրենիքի անկեղծ սէրը կառուարողն ձեռք ձեռք տուած, ձեր արդիւնաւոր գործունէութիւնը, ո՞վ անխնայ վարդապետներ, աշխարհ բոլոր, կրեմ, իր վստայութեամբ օրհնութիւնը կողովակէ այսօր ձեր անունը հաստատութեան երկհարկաւոր մակերեսի վրա։

Թերթը դարի վերջերում Կ. Պօլսից տեղափոխվում է Թիֆլիս, ուր Աղա-Մահմէդ խանի արշաւանքի եւ Թիֆլիսի կրած տառապանքների ակնատեսն է լինում եւ պատմում է ուսանողներով Թիֆլիսից նա անցնում է Աստրախան, այնտեղից Նոր-Նախիջևան։ Նրա չարադրած երգերը մեծ ժողովրդականութիւն են գտնում եւ երգվում են ամեն տեղ—Կ. Պօլսում, Աստրախանում, Վրաստանում, Ղրղււստանում եւ Նոր-Նախիջևանում։ «Նոր-Նախիջևանում»,—ասում է Սերովլէի երգերի հրատարակիչը—չէ անցնում մի ուրախութիւն կամ խնջում կամ հանդիսաւոր ճաշկերպի, ուր չը հնչվին սրա տաղերը։

Ինքը, Ռաֆայէլը, մեծ ոգեւորութեամբ է խօսում իր պապի բանաստեղծական տաղանդի մասին *): Բայց մենք, կարդալով Սերովլէ վարժապետի երգերը **, չենք գտնում նրանց մէջ առանձին աչքի ընկնող արժանաւորութիւններ։ Դրանք գրաբար, արհեստական զբոսաշրջներ են, կրօնական են ներքողական բովանդակութեամբ, եւ շատ քիչ են զանազանվում անցնող դարերի մեր գրաբար ոտանավորներից ոչ միայն իմաստով, այլ եւ ձեւի կողմից։ Եւ եթէ այդ տաղերը շատ տարածված են եղել ժողովրդի մէջ, պատճառը ուրիշ բան չէ, բայց միայն այն, որ աւելի լաւերը չը կային այն ժամանակներում, որ երգերից մի քանիսները յարմարեցան էին քեֆերին ու զուարճութիւններին։ Բացի դրանից, երգերի մեծ մասը ներքողներ են, նուիրված

«Կեցցէ՛ք, ուրեմն, հերապ։ Արքայալիք, կեցցէ՛ք իմ դատարարներս, որոնց գրեթէ ամբողջ այս սեղանին շուրջը կը տեսնեմ, կեցցէ՛ք հայ ազգը, կեցցէ՛ք Միժենակեան հայրերը, որեւտեղեք քաղաքակրթութեան քարոզիչները, եւ կեցցէ՛ք նոյնպէս Սափորիոյ շնորհաւոր եւ զիւրազանական ցեղը եւ իմ երիտասարդ հայասէր Արքային»։

Ժամը 5 1/2-ին վեր ելանք սեղանից։

Մի քիչ հանգստանալէ յետոյ ներքին պարտէզի կենտրոնը հաւաքված կատարեցինք Միժենակեան Արքայի արձանի հիմնադրութեան արարողութիւնը։ Հիմնադրար տակ մազադարձեալ մի արձանագրութիւն գետեղեց Արքայալիք, իր, Իւթիւճեան սրբազանի եւ ուրիշների ստորագրութեամբ վաւերացված։ Այս հանդիսի միջոցին տողերս գրող մի քանի խօսք ասաց ի զիւրազ հայ լրագրութեան, որի միակ ներկայացուցիչն էր երկու հանդիսական օրերի մէջ էլ, եւ յոյս յայտնեց որ հայ ազգը եւ հայ լրագրութիւնը պիտի ջանան Միժենակեան Արքայի արձանի յիշատակարան-արձանը կանգնել քիչ ժամանակէն։

Գրչերը լուսազարդված էր ամբողջ կղզին։ Մի կողմից բնիկական հրախաղութիւններ եւ միւս կողմից գոյնզգոյն լապտերներ, կարծես, բոցավառում էին կղզին։ Դիմացը՝ Լիդո կղզին՝ նոյնպէս լուսաւորված էր բազմաթիւ լապտերներով եւ անվերջ հրախաղութիւններ էին կատարվում հոն ի պատիւ Միժենակեանների։ Այսպէս նաեւ վեհապետի քաղաքը մասնակցում էր Միժենակեան հայրերի ուրախութեան հանդէսին, լուսավառութիւններ անելով հասարակաց պարտէզում։ Այս ամենը մենք տեսնում էինք հեռուից եւ հրճվում։ Պատիւը միայն Միժենակեաններին չէր, այլ ամբողջ հայ ազգին, վաճիղից այստեղ, վեհապետի, «Միժենակեան» անունով չեն ճանաչում ու Ղազարի միաբանութիւնը, այլ միայն հայ (Armeni) անունով։

Կ. Յ. Բաւմաշեան

ՆԱՄԱԿ ԽՐԱՍԳՐՈՒԹԵԱՆ

Մանգլիս, յուլիսի 25-ին
«Մշակի» 160-դ համարում Յարութիւն քահանայ ձուլութեանցի գրած նամակն ըստին խնդրեմ թող տաք մի քանի խօսք անել։
Նախ, ձուլութեանց քահանայ «Մշակ» լրագրի 108 եւ 141 համարներում իմ գրած նամակները կարգալիտ, կարգացել է ոչ թէ այն, ինչ որ ես եմ գրել, այլ այն, ինչ որ ինքն է մտածելու եղել։ Եթէ հայր ձուլութեանցը ներքին կրէ եւ իմ գրած երկու նամակները տեսնէ, եւ ոչ մի ժամանակ այն միտքը չեմ յայտնել, թէ ես հայրենեաց տուել վերջապէս եմ ինձ արդար եւ ճանաչում։ Ես առաջին իմ գրած նամակներում հաստատեցի, որ ստացել են գործերը եւ ստում են։ Գանի որ պ. Տէր-Մարգարեանցը «Մշակի» 124 համարում խոստովանում է, որ ստացել է 1901 թ. հայրենաժողովի 295 ր. 25 կ. դրամ, իսկ հ. ձուլութեանցը «Մշակի» 160 համարում իմ

ուսուց կայսրներին (Ալեքսանդր I, Նիկոլայ), զօրավարներին (Յիգիանով, Պատկելի), հայոց կաթողիկոսներին, եպիսկոպոսներին ***).

Բարի է Նահին զին սովին փող ինչ ոտել. Ղալիսը չըլիլին եւ ձորանին անուշ անել. Գեր Խաչաւանքի Գիթոն Դապուն լսող տալան. Գեպապ Պրեան, ապա բազ, կոսով ընդ ապալալան. Ինձ Մանգլիս, Գլա խորովի ֆիլան ֆիլան. Թողէք Խման Պալիս չօրպալն եւ տապալան. Եհսա ժամանակ բաւալ զփէլաթ քոթկալից, Անուլ զճաշակ ի լըմպիկալ զանապալից...

Աւելի նշանաւոր է Ռաֆայէլի հայրը, Գարեթէլ քահանայ Պատկանեան։ Իբրեւ ուսուցիչ նա յայտնի է Նոր-Նախիջևանի իր դպրոցով, ուր սկզբնական ուսում ստացան մեր մտաւոր վերածնութեան երկու առաջնակները—Ռաֆայէլ Պատկանեան եւ Միջայլէ Նալբանդեան։ Գարեթէլ քահանայ թեւականների վերջում Գարեթէլ քահանայ հրաւիրվեց Թիֆլիս, Ներսիսեան զբոսը տեսնելու։ Այստեղ, 1850-ին, նա սկսեց խմբագրել եւ հրատարակել առաջին աշխարհաբար լրագրիչը՝ ուսանալիքի մէջ, «Արարատ» շաբաթաթիւրը։ Տէր-Գարեթէլն էլ գրել է շատ ոտանավորներ։ Եւ իբրեւ բանաստեղծ, նա իր հօրից մի քաջ առաջ է գնացել. շարունակելով, հօր նման, ոտանավորները գրել գրաբար լեզուով, նա սերում էր ընտրել իր քնարի համար պատմական նիւթեր, մասնաւոր հայոց պատմութիւնից վերցրած նիւթեր։ Ռաֆայէլը, իր պապին անուանելով տաղանդ, տալիս է իր հօրը հանձնար անունը։ Բայց դա պարզապէս օրդիական չափազանցութիւն է։

գրած նամակում գրանց աւելացնում է Կոկիայի գերեզմանատան պլանը։ Իսկ ինչ վերաբերում է 1900 թ. հայրենեակին, եւ հիւանդութեան պատճառով չը կարողացայ ծխական ժողովին ներկայացնել նախորդ տարիների պէս, ուստի մարտի 12-ին պաշտօնական գրութիւնով դիմել էի գործակալ քահանային եւ խնդրում էի շնորհ բերել հայրենեակը եւ գործերը ստանալու, մինչեւ որ կարող կը լինեմ հայրենեակի ներկայացնել ծխական ժողովին։ Ինչ որ վերաբերում է նրան, թէ բարձր հոգեւոր իշխանութիւնը եւ թէ ծխականները ներողամտաբար են վերաբերվում հայրենեակին, եւ թախանձաղին խնդրում եմ թէ հոգեւոր իշխանութիւնից եւ թէ Թանգույեան եկեղեցու ծրարականներից՝ գործին վերաբերվեն անկեղծ, եւ եթէ ես բան եմ սեփականացրել եկեղեցու գումարներից եւ կամ որ եւ է բանում կեղծել եմ, անշուշտ գործը յանձնեն մարմնաւոր իշխանութեան՝ յանցաւորին պատժելու համար։ Ես ոչ ոքի ներողամտութեան կարօտութիւն չեմ զգում։

Ս. Ղաճաղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ ամենայն հայոց Կաթողիկոս Մկրտիչ I սեպտեմբերի 20-ին Երեւանից ճանապարհ է ընկել դէպի Թիֆլիս, Նորին Վեհապետութեան գալստեան սպասում են Թիֆլիսում այսօր, սեպտեմբերի 23-ին։

Ուրբաթ, սեպտեմբերի 21-ին, հաղորդակցութեան ճանապարհների միջոցով իշխան Նիկոլ կով այցելեց Կովկասեան ցուցահանդէսը եւ նայեց նրա բոլոր բաժանմունքները։

Այսօր, սեպտեմբերի 23-ին, հաղորդակցութեան ճանապարհների միջոցով իշխան Նիկոլ կով, Անգրիկական երկաթուղու արտակարգ գնացքով Թիֆլիսից, Բալաշարի կայարանի վրայով, կը մեկնի դէպի Պետերբուրգ։

Մեզ հեռագրում են Ռոստովից, որ Գամառ-Փաթիպայի մահաբանի բացմանը ներկայ լինելու համար՝ այնտեղ հասել են ներկայացուցիչներ Մովկայի հայ գաղութի կողմից։

Մեզ հաղորդում են, որ գինեգործութեան ժողովի բացումը նշանակված է հոկտեմբերի 14-ին, կիրակի օր։ Այդ ժողովի կազմակերպողը եւ նախագահն է Վ. Ստարոսելկիյ։

Այսօր, կիրակի, սեպտեմբերի 23-ին, Կովկասեան ցուցահանդէսում Ա. Քալանթար կը կարդայ դասախոսութիւն Կովկասեան կաթնատնտեսութեան մասին։ Դասախոսութիւնը կը կարգադրի ցուցահանդէսի թատրոնում, ժամի 4-ին։ Մուտքը կը լինի ճիւղ։

Կովկասեան ցուցահանդէսը, ի միջի այլոց, պէտք է այցելեն նաեւ Բագուի կլասիկական գիմնազիայի բարձր դասարանների աշակերտ-

Գարեթէլ քահանայ չունի մի հատ բանաստեղծութիւն, որ իր հռչակաւոր որդու բանաստեղծութիւններին հաւասարվէր։

Սերովլէ վարժապետի թողած սերունդը աւելի եւս բնորոշելու համար չը մոռանանք յիշել այստեղ, որ նա ունէր մի ուրիշ որդի էլ, դարձեալ քահանայ, Տէր-Պետրոս, սրա որդին էր Գերովլէ Պատկանեան։ Դորպատեան երգիչների շրջանում Գերովլէն աշխուժ քնարահայրներից մէկն էր. նա է շատ բան թարգմանել գերմաներէնից, նա ունի գրած եւ ինքնուրոյն բանաստեղծութիւններ։ Բայց յետոյ նա թողեց դպրար եւ անուն հանեց իբրեւ գիտական պրոֆէսոր։

Մի ամբողջ գրական ընտանիք։ Եւ այդ գրական սերունդի փայլուն աստղը Ռաֆայէլ Պատկանեանը եղաւ։

Իսկական բանաստեղծները ծնվում են բանաստեղծ։ Դիւմ մինչեւ Դորպատ գնալը, մինչեւ դորպատեան երգիչների մէջ մտնելը, 1850 թ.ականին, նա, դեռ 17 տարեկան պատանի, կիսատ է թողնում իր ուսումը Լազարեան ճեմարանում, գալիս է Թիֆլիս իր հօր մօտ, Ներսիսեան դպրոցում ուսուցչութիւն անելու։ Ահա այստեղ, Կուրի ափերին, առաջին անգամ յայտնագործվում է այն տաղանդը, որ ամբողջ հայութեան սրտերը յուզելու երկայնի կոչումն ունէր։ Վերին աստիճանի սրտառու է եւ այս հանգամանքը. հայրն է, որ առաջին անգամ դուրս է բերում որդու աշխարհի առաջ. հայրական «Արարատ» է, որ առաջին անգամ տպւում է Ռաֆայէլի ոտանավորները։

(Չը շարունակվի)

*) «Ազգային» Նրգարան Պամա-Պաթիպայի, Պետերբուրգ, 1856, առաջադրանք։
**) Ցայլած են Սովկայում, 1857-ին

***) Ճաշակ տալու համար բերում ենք մի կտոր նոր-նախիջևանցիներին նուիրած մի երգիչ հետեւալ կտորը.

ները, որոնք այդ նպատակով խուճար-խուճար կը սկսեն գալ Թիֆլիս: Աշակերտների առաջին խումբը կը գալ Թիֆլիս այս ամսի վերջին:

Մեզ հաղորդում են, որ երիտասարդ հայ երգիչ Ս. Բարխուդարյան, որ սովորել է երգեցողութիւն Իտալիայում, գերտաւորութիւն ունի եկող կիրակի, սեպտեմբերի 30-ին, տալ մի լոնցերտ: Պարոնը սովորել է Միլանի յայտնի աննօր Օրթիգիէի մօտ եւ այնուհետեւ մի քանի տարի էլ պէտք է կատարելագործվի նրա զեկավարութեան տակ: Կոնցերտին կը մասնակցեն օրիորդ Պասիկ, որ սովորում է Միլանի պրոֆեսոր Վիդալի մօտ եւ Թիֆլիսի երաժշտական դպրոցի ուսուցիչներ՝ Բրօշի եւ Դօրօթօթի: Կոնցերտը տեղի կունենայ Թիֆլիսի ժողովարանում:

Թիֆլիսում, տեղական լրագիրներին անելով, կազմվում է մի ընկերութիւն, «Ժողովրդական առողջութիւն» անունով: Ընկերութիւնը պէտք է ունենայ իր դեղատոմսը քաղաքի կենտրոնական մասերից մէկում, իր լաբորատորիան ամենայն տեսակ վերլուծութիւնների համար, արհեստական-հանքային, նոյնպէս եւ պտուղներից պատրաստվող ջրերի օրինակելի գործարան, որտեղ կը բանեցնվեն ամենատար օրտեսները գործիքներ: Իր գործունէութիւնը ընդարձակելու ժամանակ, ընկերութիւնը մտադիր է հիմնել նաեւ մի բուժարան: Ընկերութեան գլխավոր նպատակն է հայթայթել իր բաժնետէր-անդամներին էժան գներով ինչպէս դեղեր, այնպէս էլ այն բոլոր արդիւնքները, որոնք կը պատրաստվեն նրա հիմնարկութիւնների մէջ: Իւրաքանչիւր բաժնի գինը որոշած է 50 ռուբլի, մաս առ մաս երեք եւ կէս տարվայ ընթացքում վճարելու պայմանով: Բոլոր բաժնիները պէտք է լինեն 1,600 հատ: Այս օգտաւէտ գործի գլուխ կանգնած են ըր՝ Ժիլկեր, դեղագործութեան մագիստրոսներ, դեղագործներ եւ մի քանի հոգի տեղական դրամատերերից: Ընկերութեան հիմնադրներին առաջին ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ փետրվարի, սեպտեմբերի 20-ին:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգում կազմակերպվում է մի նոր կրէդիտային հիմնարկութիւն Արեւելեան բանկ» անունով: Բանկի հիմնական դրամադուրը հաւասար է 15 միլիոն ռուբլու: Բանկը գլխավորապէս գործեր պէտք է վարէ Պարսկաստանի հետ: Արեւելեան բանկի» կազմակերպութեան մէջ, բացի երկու խոշոր բանկային տըներից, ետանդուն մասնակցութիւն ունեն նաեւ կովկասեան մի քանի դրամատէրեր:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Անպատեմբերի 19-ին, երեկոյան 7 ժամին, հրդեհ պատահեց Բալթիանիում, որը շարունակվեց մինչեւ առաւօտ: Այրվեցին 35 վիշկաներ: Այրված վիշկաները պատկանում էին՝ Ի. Ն. Տէր-Յակովբեան եւ ընկ., Նօթլին, Շագիրդանովին, Կօկօրեվին եւ ուրիշներին: Բացի վիշկաներից այրվեցին մեքենաները եւ նախ պահեստներ: Վնասը դեռ եւս չէ որոշված, բայց բաւական մեծ է: Որքան մեզ յայտնի է, բացի Տէր-Յակովբեանից, ոչ ոք ապավայրած չէր իր ջոյքը: Օգոստ քաղելով դէպքից, տախտակ ձախողները բարձրացրին փայտեղէն նիւթերի գները 5—10 կօպէկով:

ԱՐՄԱԽԻՐԻՑ մեզ գրում են. «Այսօր, սեպտեմբերի 18-ին, տեղիս Առաքածաժողով եկեղեցում, խուճն բազմութեան ներկայութեամբ, կատարվեց հոգեհանգիստ Գրիգոր Զանչեանի մահվան տարելիցի առթիւ: Գէորգ քահանայ Սէֆէրեան ձառ խոսեց, գրուածներով Զանչեանին թէ իբրեւ իրաւաբանի, որը արդարութեան համար ամեն ինչ զոհում էր, թէ իբրեւ ազգային բարերարի, որի շնորհիւ ահագին թւով օրեր են պահվում, եւ թէ իբրեւ գրողի, որը մեծ ծառայութիւն է մատուցել ուսմանը: Նոյն միտքը բացատրեց չէրքէզերէն պատարագի վերջում, որովհետեւ ներկայ եւ զողորմի կէսից աւելին հայրենի չէր հասկանում: Պատարագին երգում էր պ. Շահանեսի քառամայն խումբը: Հոգեհանգիստ կատարելէ Զանչեանի համար նաեւ տեղիս ս. Գէորգ եկեղեցում, տեղիս երիտասարդների նախաձեռնութեամբ: Լսեցինք, որ այնտեղ գեղեցիկ ատենաբանութիւն է արել Նրեմիա քահանայ Ստեփանեանցը:

ԱՆԱԼՔԱՆԱԳԻՑ մեզ գրում են. «Մօտ օրերս շեւանում, նա հարազատ է Մշի դաշտում,

նա հարազատ է մայր-Արաքսի ափերում, նա հարազատ է Թիֆլիսի հայրենի մէջ, նա հարազատ է Ամերիկայի հայ պանդուխտների մօտ, նա հարազատ է ամեն տեղ, ուր հասնում են հայրենի ժողովրդի հառաչների արձագանքները:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պրանտիական լրագիրները հաղորդում են, որ հանրապետական կառավարութիւնը առաջարկել է Թիֆլիսի ընդունել եւ ձանաչել Տոնիսի նաւ կապած պայմանագրութիւնը: Փրանտիական պրօսէկտորատի մասին, որպէս ֆրանս-թիւրքական դիվանագիտական յարաբերութիւնները վերականգնելու պայմաններից մէկը:

—Միացեալ-Նահանգների նոր նախագահ Բուզզէլտ, ինչպէս հաղորդում են արտասահմանեան լրագիրները, անձամբ է մշակում անիլաւանականների դէմ ուղղված օրինագիծը, որի անհնաւական կէտերից մէկն էլ այն է, որով արգելվում են այն բոլոր ընկերութիւնները, որոնց նպատակն է կործանել այժմեան հասարակական կազմակերպութիւնը: Նախագահը որոշել է մտցնել եւ մի կէտ Ամերիկա գաղթողներին վերաբերեալ օրէնքի մէջ, որի գործութեամբ թոյլ չի տրվի Ամերիկա մուտք գործել այնպիսի անձանց, որոնց քաղաքական հանձնարարները «կասկածելի» են:

—Չօգոյ մանկան պատմի կենթարկվի հոկտեմբերի 7-ին: Յանցաւորին կը նստեցնեն մի առանձին բազկաթոռի վրա եւ կը թողնեն նրա մարմինը մէջ 3000 վօլտի էլէկտրական հոսանք, որն եւ րօպէսպէս կը սպանէ նրան: Մանկան պատմի էլէկտրականութեան միջոցով մտցրած է Միացեալ-Նահանգներում 1890 թ.-ից, կախարանի փոխարէն, որը այնուամենայնիւ գործածական է դեռ եւս շատ նահանգներում: Յանցաւորին ամուր նստեցնում են. նրա գլխին դնում են մի պղնձեայ օղակաւոր, իսկ ոտների տակը՝ մետաղեայ պատուանդան՝ էլէկտրականութեան երկու թելերով համար: Մինչեւ այժմ չէ վճռված այն հարցը, թէ այսպիսի պայմաններում վայրկեանական է լինում արդեօք մարդ, որովհետեւ բժիշկների փորձերը ցոյց են տալիս, որ կարելի է կենդանացնել ամեն մարդու, որ ենթարկվել է էլէկտրական հոսանքի գործող ազդեցութեան: Շատ դատաւարապետներ մէջ էլէկտրական հոսանքը առաջացնում է զարմուտքի եւ տեսական ջգաձգութիւններ, որոնց տեսարանը մահվան պատիժների զանազան տեսակների մէջ ներկայացնում է ամենազարմուտքի:

—Շահանայից հաղորդում են անգլիական լրագիրներին, թէ այնտեղ յամառութեամբ լուրեր են պատած նոր ապստամբութեան մասին, որ նախապատրաստում են նախկին բռնաշեքամարտիկները եւ նրանց բարեկամները: Չինաստանի կենտրոնական եւ հարաւային նահանգներում Ամերիկ հետադարձական այն է, որ բռնաշեքամարտիկները այս անգամ ունեն հիանալի ղէնքեր, սակայն անյայտ է, թէ որտեղից են նրանք ձեռք բերել այդ ղէնքերը:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մ Ա Ն Բ Ա Ն Կ Ա Ր

Այսօր բացվում է արձնայի Կանգնած Պատմա-Քաղաքային գերեզմանի վրա: Այդ արձանը այսօր դէպի ինքն է գրաւում մեր հոգիները եւ զգացմունքները: Թանկագին մահաբան: Քո առաջ՝ մենք գլուխ ենք խոնարհեցնում այն մարդին հոգու անջնջելի յիշատակին, որի երգերում մեր ժողովրդի հառաչները եւ սրտի զեղծմանը հնչվեցին այնպիսի հարազատութեամբ եւ խորութեամբ: Թող բազմաթիւ պատկերներ եւ արտայայտութիւններ միանան եւ այսօրվայ մեր մի քանի տողերը:

Ռաֆայէլ Պատկաները ունեցել է եւ նախորդներ եւ ժամանակակիցներ եւ յետորդներ: Դրանց մէջ եղել են անձինք բանաստեղծական մեծ աւելումով, խոր զգացմունքներով եւ արժեքով ոտանաւորներով: Եւ ասկայն նրանք չեն կարողացել որոշ սահմանից, որոշ չըջանից դուրս ազդեցութիւն գործել եւ սրտից գրաւել Պատմա-Քաղաքային էր վերապահված մրտանի ժողովրդական մասաների խորքերը: Նըրանք էր վիճակված հարազատ բանաստեղծ լինելը բոլոր հայրեր համար, որոնք գտնվում են թէ մայր հողի վրա եւ թէ հայրենիքից դուրս գաղթականութիւններում: Նա մեր ժողովրդի հոգու հատորն է, նրա սրտի կտորը:

Նրա երգերում արտայայտված են ժողովրդի հոգեկան արմատները: Նրա տեսչանքները, բողոքները եւ հառաչները: Ոչ ոք մեր բանաստեղծներից չը կարողացաւ այնպիսի ընկալան, անարեւոտ, մատչելի լիզուով խօսել ժողովրդի հետ, ինչպէս Պատմա-Քաղաքային: Նա ընտանի էր, նա մտերիմ էր իր հայրենի ժողովրդի մէջ: Նա հարազատ է իր հայրենի Նոր-Նախիջևանում, նա հարազատ է Մշի դաշտում,

նա հարազատ է մայր-Արաքսի ափերում, նա հարազատ է Թիֆլիսի հայրենի մէջ, նա հարազատ է Ամերիկայի հայ պանդուխտների մօտ, նա հարազատ է ամեն տեղ, ուր հասնում են հայրենի ժողովրդի հառաչների արձագանքները:

Միթէ Նոր-Նախիջևանի ամբողջ չէ գգում, որ նրա հետ խօսեցողը այդ ժողովրդի զաւակն է:

Միթէ Մշու ժողովրդը ինքը չէ երգում ամեն օր:

Մեզի մոռացաւ հայոց ազգը.. Ապա որքն մենք գտնադրեցինք:

Միթէ Թիֆլիսեցին ամեն անգամ չէ զարմանում, թէ որքան մեծ տաղանդով Պատկանները դրել է նրա բերանում:

Թէ սիրում ես թամաշա Պտիս տէնի քաղցրեմը:

Միթէ գիւղացին չէ գգում, որ նրա եղբայրն էր նա, ով «հայի գութան, հայի գութան» երգելով պահանջում էր այդ գութանի իրաւունքները:

Պատմա-Քաղաքային սիրեց իր ժողովրդին, երգեց նրա համար: Եւ ժողովուրդն էլ նրան սիրեց եւ պահեց նրան իր առաջին բանաստեղծ անունով:

Հետո հայրենիս մեծամասնութիւնից, Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքում թաղված Պատկանները անմահ ապրում է իր երգերով հայրենի ժողովրդի մէջ: Եւ նա կարգի, որովհետեւ նա այդ ժողովրդի հոգու թարգմանն էր եւ հառաչների արտայայտողը, որոնց մասին, ինչպէս մի ուրիշ բանաստեղծ ասաց՝ Նոքա հառաչք են հայրենեաց, Նոքա չերթան սրտէն ի բաց:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՄԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ
21 սեպտեմբերի

ՏԱՄԲՈՎ: Սեպտեմբերի 19-ին այցելեց Տամբով պետական ձիարուծութեան Օգոստափառ գլխավոր կառավարիչ Մեծ-Իլիան Դմիտրի Կոնստանտինովիչ: Նորին Բարձրութիւնը նայեց պետական ձիարուծարանը եւ երկարաւիշտ պատմելով գնացքով մեկնեց դէպի Կօզլով:

ԼՈՁ: Այսօր, հոկտեմբերի առաջին թւերին, սպասում են ժողովրդական լուստարութեան միջնորդին:

ԿԻՏՎ: Երեկոյեան մօտ 11 ժամին երեք անաւոր անձինք փորձեցին մտնել Դնեպրի ափում գտնվող փայտեղէնի պահեստների գրասենեակը: Կողպէքները կոտորելու արգելք դարձաւ գիշերային պահապանը: Հարազատները փորձեցին կողպան պահապանին եւ խնցիկ նրա դատարի քսակը: Պահապանը փախաւ: Կողպաները ներքին իրաւունքներ արձակեցին, բայց անաւորը: Ապա կողպանները գնացին գետի ափին գտնվող ձկնորսների մօտ եւ փող պահանջեցին: Ձկնորսների ազադարի վրա եկաւ մի օտարկան, որի վրա գնդակ արձակեցին չարագործները եւ վիրաւորեցին նրա կուրծքը: Վիրաւորվածը ուղարկված է հիւանդանոց: Կողպանները փախան եւ անյայտացան:

Կ. ՊՈԼԻՍ: Թիւրքական հեղինակաւոր ազգային զրականագէտ հեղինակ է այն լուրը, թէ Թիւրքական կառավարութիւնը մտադրութիւն ունի ձեռնամուկ լինել Կովկասի դրամանը, մի եւ նոյն ժամանակ աւելացնելով, որ այդ գրուածը չէ համապատասխանում թիւրքական չափերին եւ բացի օրանից՝ նա կը հանդիպէր վճարական դիմագրութեան Անգլիայի կողմից: Օսմանեան կառավարութիւնը կամենում է միայն արգելք դնել զէնքի ներմուծմանը դէպի Արաբիա Կովկասի վրայով, ինչպէս այդ պայմանաւորված էր Անգլիայի եւ Բ. Դընան մէջ այն համաձայնութեամբ, որ կապվեց Կովկասի մէջ պատահած առաջին ընդհարման վերաբերմամբ: Բարբայի նահանգագետ Ալի-Էլեմէին փայտային պաշտօնից հեռացնելը բացատրվում է նրանով, որ նա քրտացուցիչ կերպով չէր կառավարում նահանգը:

22 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պրտական իշխան Հէնրիխ եւ իշխանուհի Իրենա ժամանեցին Սպալա՝ Նոքա Մեծութիւններին մինիստրութեան համար:

ԼՈՁ: Եկաւ ֆինանսների մինիստրութեան առեւտրական բաժնի տեսուչը՝ ժանօթնաւոր տեղական գործարանների հետ, ուր պատրաստվում են գլխարկներ եւ կոճակներ: Այցելութիւնը մասնաւորապէս ձեռնարկված է համապատասխան տեղեկութիւններ ժողովրդու նպատակով եւ վճելու համար մի հարց, որ լրացված է Գերմանիայի հետ կապվելիք առեւտրական զանալկութեան հետ:

ԳՐՈՂՆԻ: Մաքսիմովսկու անգլո-ռուսական նախարարներական ընկերութեան հորից նախի շարունակ խփեց, որ տալիս է 500,000 պուլից ոչ պակաս նւութ:

ԼՈՆԴՈՆ: Լրագիրները լուր են հաղորդում, թէ թագաւորը հիւանդացու Բալմօրալում յօգաւաւում, որը լուրջ բնաւորութիւն չունի, բայց եւ այնպէս հարկադրում է թագաւորին հրաժարվել առ այժմ որսորդութիւնից եւ բաւականանալ կառքով կատարվող զբօսանքներով: Թագաւորի աւագ-բժիշկը գտնվում է Բալմօրալում:

ԼՈՆԴՈՆ: Բալմօրալից հաղորդում են, թէ թագաւորը չէր մասնակցում վերջին օրերի որսորդութեանը, բայց երկէ եւ այսօր կառքով դուրս էր գալիս պալատից: Թագաւորը տանջվում է մէջքի յօգաւաւում, բայց հիւանդութիւնը իրկիւղալի բնաւորութիւն չէ կրում:

ԼՈՆԴՈՆ: Բալմօրալից ստացված տեղեկութիւններով, արքայական զոյգը կէսօրից յետոյ դուրս եկաւ պալատից զբօսանքի: Թագաւորը համարեա բոլորովին առողջացել է հիւանդութիւնից:

ԼՈՆԴՈՆ: Ինչպէս երեւում է կորուստների վերջին ցուցակից, Կէկէվիչի զօրաբաժինը ունեցել է Դէլարէյի վերջին յարձակման ժամանակ 45 օսանված եւ 114 վիրաւորված, չը հաշուել շատերին, որոնք թեթեւ վէրքեր են ստացել: Սմուտ, որի հետ միացաւ Բոտայի կրակակից եկած փոքրիկ զօրաբաժինը, չապով գնում է դէպի հարաւ, նպատակ ունենալով, ըստ երեւոյթին, միանալ Շէպէրսի հետ: Կալվինի զօրաբաժինները շարունակում են գնալ դէպի հարաւ:

ԲԻՐԻՍՍԵԼ: Հաւաքայից հաղորդում են, թէ Կրիգեր երբեք չէ մտածել պատգամաւորութիւն ուղարկել Բուզզէլտի մօտ՝ միջնորդութիւն խնդրելու համար: Ընդհակառակը՝ Բուզզէլտին ուղարկված է պաշտօնական բողոք ձեռքի եւ ջրիների արտահանութեան վերաբերմամբ:

ՅԱՔԱՐԻ՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱՆԱԹԱՐ
Հրատարակիչներ: ԲԱՅՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՆԱԿԱ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՒՆԿԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուրիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

ա մ ե ճ օ Ր, բ ա ջ Ի Կ ի ա Կ ի օ Ր Ե Ր Ի յ ց:

Ա Ռ Ա Ռ Օ Ց Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նախաւորեցի—11—12 ժ. վիրաւորութեան, վնասակար (սիֆիլիս) և միջատաւ հիւանդ.

Ն. Մ. Ձիվովսկի—9—10 ժ. ալքի, ներքին և նեարային:

Ն. Բ. Գրիվիլ—12—1 ժ. ակննշի, թթի և կուրդի:

Չ. Բ. Բարաւոտեանց—11—12 ժ. կանանց և երեխայից հիւանդ.

Մ. Պ. Կարապետեանց—1—1 1/2 ժ. ներքին և երեխայից:

Ն. Ն. Ռոստոմիրով—5—6 ժ. վիրաւորութեան և մօրթու:

Մ. Ն. Եպիփանի—6—7 ժ. նեարային (երկու տարրով), վնաս. և մօրթու:

Գ. Մ. Թաւրաւեանց—7—1 1/2 ժ. ներքին և երեխայից:

Բ. Ա. Նախաւորեցի—7 1/2—8 ժ. Կնար 50 կ. ջրաւորներ ձրի, Համախորհրդի (Կոնսիլումի) և օպերացիայի համար առանձին:

Փ. Տ. Առաքելեան—առանձին, Ժողովարան և բժշկական մարմնամարդ: Ղիմկ 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերաւորնալ:

Բժշկական ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Բ ժ Ի Շ Կ

Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆ

վերադարձաւ արտասահմանից եւ առաջվայ պէս ընդունում է ցերեկվայ 12—2 ժամ եւ 6—9 ժամը երեկոյեան միջառնական, վնասակար եւ սիֆիլիսական հիւանդութիւն ունեցողներին:

ԲԱՅՈՒՆ, ՎԻՍՏՐՈՎԱՅԱ ՆՈՒՆԵՐՆԵՐ ՀԻՐԱՆՈՅ. կաթ Թիֆլիս՝ Ալմախան փողոց, Շահրուղա-դեանի տուն, № 59, բակում:

